

**ԴԱՏ 7.4. Հողային ռեսուրսներ**

**1.** Հողի էական առանձնահատկությունն այն է, որ ձիշտ օգտագործման դեպքում ոչ միայն չի սպառվում, այլև որակապես բարելավվում է, բարձրանում է նրա բերրիությունը:

Հողային ռեսուրսները համաշխարհային հողային ֆոնդի (ընդհանուր ցամաքային տարածքի) այն մասն են, որոնք հարմար են տնտեսական օգտագործման համար: Հողային ռեսուրսները պատկանում են բազմանպատակ օգտագործվող ռեսուրսների թվին: Հողն օգտագործվում է ոչ միայն գյուղատնտեսական արտադրության մեջ, այլև բնակչության տարաբնակեցման, արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման, հաղորդակցության ուղիների անցկացման համար և այլն:

Համաշխարհային **հողային ֆոնդի** կառուցվածքը տրված է աղյուսակում: Առանց Անտարկտիդայի և Գրենլանդիայի երկրի ցամաքի ընդհանուր մակերեսը 134 մլն քկմ է, կամ 13,4 մլրդ հա-ն հողային ֆոնդն է: Հողային ֆոնդն ունի այսպիսի կառուցվածք. գյուղատնտեսական հանդակներ (վարելահողեր, բազմամյա տնկարկներ, արոտավայրեր, բնական խոտհարքներ) և ոչ գյուղատնտեսական հանդակներ (անտառներ և թփուտներ, ցածր արդյունավետ հողատեսքեր՝ բեղլեղներ, բնակավայրերի, ճանապարհների և տարբեր այլ շինությունների տակ զբաղեցված հողատարածքներ): Մշակվող հողերը (վարելահողերը, բազմամյա տնկարկները) զբաղեցնում են 1,4 մլրդ հա (11 %), բնական խոտհարքներն ու արոտավայրերը՝ 3,1 մլրդ հա (23 %), անտառները՝ 4 մլրդ հա (30 %), քաղաքային արդյունաբերական և տրանսպորտային կառուցապատման տակ է գտնվում 0,3 մլրդ հա (2 %), մնացած 4,5 մլրդ հա-ն (34 %) քիչ պիտանի և ոչ պիտանի հողերն են (ճահիճներ, անապատներ, քարքարոտ տեղամասեր, աղուտներ և այլն):

**2.** Բնակավայրերի, շինությունների և ճանապարհների տակ գտնվող հողերն աշխարհում և տարածաշրջաններում զբաղեցնում են հողային ֆոնդի 1-2 %-ը: Քիչ պիտանի և ոչ պիտանի հողերի տեսակարար կշիռը ամենացածրը Եվրոպայում է՝ 17 %, ամենաբարձրը Ասիայում՝ 42 %:

Որոշ տվյալներով մարդկությունն այսօր արդեն կորցրել է մոտ 2 մլրդ հա

բերրի հողեր: Միայն էրոզիայի պատճառով, որը լայնորեն տարածված է ոչ միայն զարգացող, այլև զարգացած երկրներում, գյուղատնտեսական շրջանառությունից դուրս է եկել 6-7 մլն հա հողատարածք:

Ժամանակակից անապատացման գլխավոր գործոնն ամենից առաջ մարդու տնտեսական գործունեությունն է. անասունների գերարածեցումը, անտառահատումները, մշակվող հողերի անարդյունավետ օգտագործումը: Շատ կարևոր է հողաբարելավման (մելիորացիա) համալիր աշխատանքների իրականացումը՝ քարամաքրումը, աղազերծումը, ոռոգումը, պարարտացումը: Հողային ռեսուրսները պատկանում են դանդաղ վերականգնվող ռեսուրսների թվին: Բնական ճանապարհով 1 սմ հող առաջանալու համար պահանջվում է 80-100 տարի: